բան Տեառն խօսեցաւ վասն իմաստութեան ասելով, այր ոմն չինէ զտուն հարկաւոր է դնել հիմն 'ի վերայ վիմի, որում յեղեղ ջրոց ոչ խախտեսցեն նմայ. նաեւս իմաստնացեալն Սողոմոն զրէ՝ թէ իմաստութիւն շինեաց իւր տուն և կանգնեաց 'ի նմայ սիւնս եօթն, այս երկու վկայութիւնս բաւական լիցի հաստատել միտս ընթերցողաց, զի տունն այսինքն ամենայն կարգադրութիւն վասն կառավարութեան յազգաց հարկաւոր է դնել հիմն 'ի վերայ վիմի հաստատութեան, այսինքն անխախտելի յօրինաց անշարժի, աներկմտի, անաւելանալոյ, և անպակասի և կանգնել 'ի նմայ սիւնս կարգաւ խորհրդականօք, որպէս տուն և բնակութիւն և ապարանք զարդարի և փայլի ընդ գեղեցիկ սեամբք, նմանապէս տունս տէրութեան և կառավարութեան հաստատուն կացցէ և մնասցէ գեղեցկափայլ օրինօք և կարգադրութեան և Օրինադէտ խորհրդակցօք։

Ցուցանեմ ես ձեզ ճանապարհն մոլորեալ և հնարն անկարելոյ, եթէ որպէս կարէ հնարաւորիլ դժուարինն մեր. նախ նայեցարուք 'ի հակառակորդէ կազմեալ 'ի չորս անմիաբանելի տարերաց է սահմանեալ բնութիւնս մեր, թէ որպիսի համահաւասար կան և մնան և շարժին կենդանի պահելով ընդ մէջ իւրեանց այս հակառակ տարերքս խաղաղութեամբ 'ի պատճառս անխախտելի սահմանի իւրոյ, նոյնպէս եղիցին բոլորո-